

Խ. Ա. Հ. Մ. Մ Ա Տ Ժ Ո Ղ Կ Ա Մ Ո Տ
ԾԽԱԽՈՏԻ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱԽՈՒԹԵՆԱ-
ԿԱՆ ԻՆՍԻՏՈՒՏ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՓՈՌՉԱԿԱՑՈՎ

ԾԽԱԽՈՏԻ ՀԱՍՈՒՆԱՆԱԼԸ ՑԵՎ
ԲԵՐՔԱԿԱՎԱՔԸ

(Միսախոստագործի քերթիկ Ա: 3)

636.46

22 NOV 2017
997


ԽՍՀՄ ՄԱՏԺՈՂԿՈՄԱՆ

ՍԻԱԽ. ԱՐԴ. ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԻՆՍԻՏՈՒՏ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՓՈՐՁԱԿԱՑԱՆ

ԾԽԱԽՈՏԻ ՀԱՍՈՒՆԱՆԱԼԸ

ՅԵՎ.

ԲԵՐՔԱՀԱՎԱՔԸ



ԳՅՈՒՂՂՐԱՑ

1943
1934թ.

ՅԵՐԵՎԱՆ

ՇԽԱԽՈԹԻ ՀԱՍՈՒՆԱՎԱԼԸ ՅԵՎ ԲԵՐՔԱ-
ՀԱՎԱՓՅ

Ծխախոտի մշակման անցյալ փորձը մեզ ցույց
է տալիս, վոր բերքի դգալի մասը դաշտում
խղուր կորչում ե լոկ այն պատճառով, վոր բեր-
քահավաքի հիմնական ազրոկանոնները կոլտնտե-
սություններում և խորհանտեսություններում
ճիշտ չեն կիրառվում. մի հանգամանք, վոր խիստ
կերպով հարգածում ե մեր ժողովրդական տնտե-
սությանը. Այս խնդիրը մեր ծխախոտագործա-
կան շրջանների խորհանտեսություններն ու կոլ-
տնտեսությունները, ինչպես նաև մենատնտես-
ները պետք ե լայն քննության առարկա դար-
ձնեն և լուրջ կերպով ձեռնամուխ լինեն ծխախոտի
բարձր բերքատվության գործին:

Ընթացիկ տարում խորհանտեսությունների
և կոլտնտեսությունների առաջ խնդիր ե դրված
ճիշտ կերպով կազմակերպելու բերքահավաքի
աշխատանքներն այնպես, վոր մեր դաշտերում
վոչ մի տերև չմնա առանց հավաքելու. Այդ
աշխատանքների ճիշտ կազմակերպման հետ միա-
սին, մեր խորհանտեսությունների բանվորները,
կոլտնտեսականներն ու մենատնտեսները խստո-



1-31849

Սբրագրիչ Խ. Այլազյան
Հանձնվել ե արտագրության 1934 թ. հունիսի 13-ին
Ստորագրվել ե տպելու 1934 թ. հունիսի 19-ին
Թույլատրված ե գլամիտի լիազոր № 279
Հրատ. № 124, տիրած 1000, Պատվեր № 459

ըեն պետք ե հետեւն հիմնական ագրոկանոների ձիշտ կիրառմանը՝ ամենաբարձր բերքատվությունն ստանալու համար:

Ծխախոտի բերքատվության թե քանակական և թե վորակական ցուցանիշները կարելի յե ձեռք բերել այն դեպքում միայն, յերբ մենք ծխախոտը հավաքում ենք իր տեխնիկական հասունացման շրջանում: Վոչ հասուն վիճակում հավաքված ծխախոտը վորակապես ցածր ելինում, դժվարությամբ ե տամելվում, ավելի յերկար խնամք ե պահանջում և չորանալուց հետո ել թեթևակշիռ ծխախոտ ե ստացվում, իսկ ծխելու համար հաճելի չի լինում, վորովհետև տերեւ լիակատար հասունություն չի ունենում: Ուշ հավաքած, այսինքն՝ չափից ավելի հասունացած ծխախոտը չորանալուց հետո, նրանից ստացված հումքը նույնպես լինում ե թեթևակշիռ և կորցնում ե իրեն առաձգականությունը, վորի հետեանքով հետագա վերամշակման ժամանակ հեշտությամբ փշրվում ու ծխելու համար անհաճելի դառնում:

Այս բոլորից հետո պարզ ե, վոր միայն նորմալ հասունություն ունեցող ծխախոտը հավաքելով, կարելի կլինի ապահովել նրա բարձր բերքատվությունը, ինչպես և նրա վորակը, վորի համար չպետք ե մոռանալ և միշտ պետք ե

հիշել վոր ծխախոտը հարկավոր ե հավաքել Ժամանակին յեվ առանց ուշացնելու:

Անկրաժեշտ ե ունենալ պատրաստի բանվորական ուժ, չորանոցներ ու գործին անհրաժեշտ այլ պարագաներ:

Ծխախոտի Տերեվիների հասունության
նույները

Հասած տերեները կորցնում են իրենց մազիկները, վորոնցով ծածկված ե լինում տերեկի մակերևույթը, ավելի յե պնդանում, իսկ նրա մուգ կանաչ գույնը փոխվում ե ավելի բաց կանաչ-դեղին գույնի ու ծածկվում մի տեսակ կպրամման շերտով: Տերեկի յեզրերը և ծայրը փոքր ինչ թեքվում են դեպի ցած, միջին ջրան ավելի բաց գույն ե ստանում (սպիտակում ե) և վորովհետև նա իր մեջ բավականաչափ ոսլա յե կուտակած լինում, հեշտությամբ պոկվում ե ցողունից: Ավելի թույլ ծխախոտի տերեները, ինչպես և առաջին քաղի ցածրի տերեները, այդպիսի դեղնավուն բծեր չեն ստանում, այլ դրա փոխարեն դեղին տեսք են ընդունում առանց բծերի:

Տերեկի արտաքին այս բոլոր նշանները կարելի յե համարել իրեւ տեխնիկական հասունացման նշան:

Առաջին 3—5 տերեների հասունությունը, վորը «դիմասր» եւ կոչվում, նայած տեսակին, սկսվում եւ մոտավորապես շիթիլելուց 45—55 որ անց:

Ծխախոսի բոլոր տերեները միանդամից չեն հասունանում, այդ պատճառով ել նրանք հավաքվում են ըստ իրենց հասունության 4—5 անգամ, միմյանցից վորոշ ժամանակաշրջան անցնելուց հետո: Յուրաքանչյուր քաղից ստացված ծխախոսն ունի իր առանձին վորակը և հատկությունը ու ատրքեր արժեք ունի, վորի համար արդյունաբերությունը պահանջում է բոլոր քաղերը հավաքել և վերամշակել առանձին-առանձին ու վոչ մի գեպքում նրանց իրար հետ չխառնել:

Որվա ինչ ժամանակին պետք եւ կատարել բաղը

Ինչպես բոլոր բույսերի, նույնպես և ծխախոտի որգանիզմն այնպես եւ կառուցված, վոր նա որվա ընթացքում իր տերեների մեջ մննդարար նյութեր—ոսլա յե կուտակում՝ իսկ զիշերն այդ նույն նյութերը բույսի տերեներից փոխազրվում են նրա մյուս որգանները՝ գեպի նրա ցողունը, արմատը և այլն, այնպես վոր տերեներն առավոտյան քիչ ոսլա յեն պարունակում, այդ պատճառով ել, յեթե ծխախոտը առավոտյան և հավաքվում, իր մեջ քիչ նյութ և պարունակում,

քան այն ծխախոտը, վորը հավաքվում եւ յերեկոյան:

Փորձերը ցույց են տալիս, վոր բարձր, ինչպես և վորակով բերք ստանալու համար, բերքահավաքի ամենալավ ժամանակը համարվում է յերեկոյան ժամը 5—8-ը: Որվա տաք ժամերին ծխախոտը չպետք եւ հավաքել վորովհետև նա այդ ժամերին թառամած եւ լինում, հավաքելիս կպչում եւ ձեռքերին, տրորվում և դժվարացնում եւ շարելու աշխատանքները, իսկ չորացնելուց հետո յել-մուգ բծեր եւ ստանում: Ուժեղ և յերկարան անձրևներից անմիջապես հետո նույնպես բերքը չպետք եւ հավաքել այլ պետք և սպասել մինչև վոր անձրևից կանչածած—թեկուղ և հասունացած տերեները, նորից ցույց տան իրենց հասունության նշանները, այլ կերպ նրանց վորակը ցածր կլինի:

Յեթե ծխախոտը առավոտյան և հավաքվում, պետք եւ հակել, վորպեսզի ցող չունենա, իսկ յեթե նրա վրա ցող և նստած—պետք եւ սպասել մինչև ցողն. անցնի, այլապես տամկացման ժամանակ կարող եւ նա փչանալ:

Բերքահավաքի աշխատանքների կազմակերպման ընթացքում անհրաժեշտ եւ նկատի ունենալ հետևյալը:

1. Քաղած տերել շենքը կամ չորանոցի սրահը տեղափոխելիս, պետք ե դարսել հատակին փուած կակուղ չոր ծղոտի վրա, կոթերը դեպի վերև, իսկ ծայրերը գեղի ներքեւ: Մի շաբթը վերջացնելուց հետո անցնում են մյուս շաբերին, և պետք ե այնպէս անել, վոր տերեները միմյանց մի թեթև սեղմեն, վորպեսզի նրանք շատ չտաքանան: Հիշված գործողությունը վերջացած կարելի յե համարել այն ժամանակ, յերբ 2—3 որից հետո նկատվում ե, վոր տերեներն արդեն դեղնավուն գույն են ստացել:

2. Բերը հավաքելու ժամանակ, բարձելու և դատարկելու ընթացքում, չպետք ե թույլ տալ, վոր տերեները վնասվեն, վորովհետև տերեկի վնասված տեղերը սեանում են, մի հանգամանք, վորը ծխախոտի վորակի վրա վատ ե անդրադառնում:

3. Ծխախոտը պետք ե հավաքել 4—5 անգամ: Վատ ծխախոտագործները տերեկի քաղերի թիվը պակասեցնում են, վորը վատ ե անդրադառնում հումքի վորակի վրա, ծխախոտը հավասարաշատ չ չորանում և խոտանի (բրակի) ավելի մեծ տոկոս ե տալիս: Անհրաժեշտ ե միաժամանակ ընդգծել, վոր բրիգադիրը պետք ե ծանոթ լինի ծխախոտին վերաբերող տեսական մի քանի կարեսը խնդիրներին, վորպեսզի կարողանա հաջո-

դությամբ պայքարել բարձր և վորակով բերք ստանալու համար:

Ծխախոտը թելին անցկացնելը

Ծխախոտի թելանցումը կատարվում ե մետաղյա հատուկ ասեղների միջոցով, վորոնք ծանոթ են բոլոր ծխախոտագործներին: Ասեղը պետք ե թելել այնպիսի յերկարությամբ, ինչպիսի յերկարություն ունեն տվյալ տնտեսության շրջանակները: Վորպեսզի ծխախոտը կանոնավոր չըրանա, նրան պետք ե շարել վոչ շատ նոսր և վոչ ել շատ խիտ: Յերբ նոսր ե շարվում, նա չուտ ե չորանում, լավ չի դեղնում, իսկ խիտ շարելու դեպքում նա կարող ե փչանակ, փտել մանավանդ յեթե յեղանակը խոնավ ե: Խիտ կարելի յե շարել մանրատերեկ ծխախոտը, չորային պայմաններում աճած ու հասունացած տերեները: Առաջին քաղի տերեները պետք ե շարել խիտ, իսկ հաջորդ յերեք քաղից ստացված տերեները նոսր, վորովհետև նրանք հաստ են լինում:

Ծխախոտի չորացնելը

Ծխախոտի չորացում ասելով չպետք ե միմիայն հասկանալ տերեկի միջից խոնավության հեռանալը, այլ նաև այն, վոր նրա մեջ տեղի յեն ունենում մի շարք պլոցեներ, վորոնցով նրանց

միջի բարդ նյութերը քայլայվելով՝ վեր են ած-
վում ավելի սլարդ նյութերի, վորի հետևանքով
և տերեկի փորակը բարձրանում է: Այդ պատճա-
ռով ել ծխախոտը չորացնելու աշխատանքը հան-
դիսանում է նրա մշակման կարևոր աշխատանք-
ներից մեկը, վորի վրա պետք ե հատուկ ուշա-
դրություն դարձնել:

Ծխախոտի չորացման առաջին շրջանը, դա
տերեների տամկացումն է, այսինքն՝ տերեներին
դեղին գույն տալը և ծխախոտի փորակը բարձ-
րացնելը: Այսպիսով, չորացման գործում, այս
պրոցեսը ծխախոտի մշակման ամենակարևոր
մասն ե կազմում:

Բարձրորակ ծխախոտ ստանալու համար չո-
րացումն այնպես պետք է կատարել վոր այդ
գործողությունը տեղի ունենա աստիճանաբար և
վերջնականապես չչորանա, մինչև, վոր ծխախո-
տը հարկ յեղած գույնն ստանա:

Տամկացման ժամանակ ավելորդ խոնավու-
թյունը նույնպես ծխախոտի վրա վատ և անդրա-
դառնում, այսպիսի գեղքում ծխախոտը կարող
է հեշտապես փոռել: Պետք ե հետեւ վոր տա-
քությունն ըստ Յելսիուսի 30—35° ջրարձրանա
(ունենա նոր կթած կաթի տաքություն), իսկ
յերբ նկատվի, վոր տաքությունը բարձրանում է,
հարկավոր ե տեղաշարժ անել (քրքրել) և նորից
դարսել, վորից և նա կհովանա:

Տամկացում կատարվում է նաև շրջանակնե-
րում: Այսպիսի տամկացման դեպքում արդեն
թելին անցկացրած ծխախոտը կախում են շրջա-
նակների վրա և 1—2 ժամ դնում են արևի տակ,
փորպեսզի տաքանա, վորից հետո ծխախոտը շա-
րաններով ներս և տարվում, և տերեները միմյանց
ավելի մոտեցնելով՝ թողնում են այնքան ժամա-
նակ, մինչև վոր ծխախոտը կստանա հարկ յեղած
դեղին գույնը:

Ծխախոտը տամկացնելուց հետո, յերբ նա
արդեն բարականաչափ կորցնում է իր կանաչ-
գույնը և գեղնագույն ե դառնում, անհրաժեշտ ե
հոգ տանել, վոր չորացնելիս այդ դեղին գույնը
հետագայում պահպանվի: Դրա համար պետք է
տերեներից աստիճանաբար խոնավության մնա-
ցորդները հեռացնել: Հենց այդ նպատակով ել
ծխախոտը շրջանակով արևին են տալիս:

Չորացնելու այս պրոցեսը պետք է կատարել
աստիճանաբար և վոչ թե միանգամից:


Լավ գույն ստանալու համար, չորացնելիս՝
ոկզբում ծխախոտը արևին պիտի տալ միայն մի
քանի ժամով, խուսափելով որվա ամենատաք ժա-
մերից, իսկ հետո կարելի յե արևի տակ թողնելու
ժամերը յերկարացնել: Չորացնելու վերջին, յերբ
տերեներն սկսում են արդեն չորանա, ծխախո-

տըն արեկ տակ կարելի յե թողնել ամբողջ որը,
բացառությամբ քամի և անձրև որերի, վոր պետք
է ներս տանել և բաց ոդում չթողնել:

Լավ չորացած ծխախոտը ճանաչվում ե տե-
քերեկի միջին յերակից, նրա ամենահաստ տեղից,
շարած ասեղի ծակած մասին սեղմելուց. յեթե
այդ սեղմելուց խոնավության նշաններ չեն յե-
րեսում, ուրեմն ծխախոտը չոր եւ Յ—Յ շար
գած ծխախոտը շրջանակներից վերցնելով, կիսով
ծալում են և միմյանց կապերով հավանդ կազ-
մում ու կախում են ծխախոտի նույն շենքի
առաստաղից:

Հիշյալ ագրոձեռնարկումները լրիվ կերպով
կիրառելով, կորուստների դեմ պայքար ծավա-
լելով, մենք կապահովենք ծխախոտի բարձր բեր-
քատվությունը:

Հայտատանի ծխախոտի փորձակայան



ՀՀ Ազգային գրադարան



NL0927618

9160 10 4.

193 $\frac{4}{5}$ - 488

1
—
3184



СОЗРЕВАНИЕ И УБОРКА ТАБАКА

Сельхозгиз

1934

Эривань